ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ Է ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԸ

01.06.2020 15:03

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի անունից շնորհավորում ենք բոլոր երեխաներին՝ երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ:

Այսօր երեխայի իրավունքները Հայաստանում առավել քան պաշտպանված են: Մենք ջանք ու եռանդ չպետք է խնայենք, որպեսզի երեխաներն ունենան խաղաղ մանկություն ու ստանան հայեցի դաստիարակություն՝ զերծ այլասերումից ու մանկությունը խեղող արատավոր երևույթներից: Մենք բոլորս էլ դաստիարակվել ենք ավանդական հայկական ընտանիքի գաղափարներով ու շարունակում ենք դա փոխանցել մեր զավակներին, որովհետև հայկական ավանդական ընտանիքն է մշտապես կարողացել պահպանել հայի ազգային կերպարը ու դիմակայել արտաքին ճնշումներին:

Փաստաբանների պալատում արդեն ավանդույթ դարձած երեխաների տոնն այս տարի չենք նշելու կապված համավարակի հետ: Այնուամենայնիվ, Փաստաբանների պալատի անդամների երեխաների անունից «Հայ մայրեր» բարեգործական հասարակական կազմակերպության 40 երեխաների համար նվերներ է հանձնվել:

Մաղթում ենք աշխարհի բոլոր երեխաներին առողջություն, խաղաղություն, երջանկություն ու անհոգ մանկություն:

ՀՀ փաստաբանների պալատի

նախագահ՝ Արա Զոհրաբյան

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ
01.06.2020
- 2014 -
- 2014 -
- 2014 -
- 2017 -
- 2017 -
- 2017 -
- 2015 -
- 2015 -
- 2015 -
- 2020 -
- 2020 -
- 2016 -
- 2016 -
- 2016 -
- 2018 -
- 2018 -
- 2018 -
- 2019 -
- 2019 -
- 2019 -

PALETTE
PALETTE
(A)Trailer

PALETTE
PALETTE
Grad Party

JOYCO
JOYCO

Fraction disk
Fraction disk
Changeable Blocks
Դեղին կիր
WARNING!

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })